

**“ԻՆՉՊԵ՞Ս ԿՐՆԱՄ ՀԱՍԿՆԱԼ
ՅԻՍՈՒՍԻ՛ ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԵԹԷ ՄԵԿԸ ՉԱՌԱՋՆՈՐԴԷ ԶԻՍ”**

1. “Կարդացածդ Կը Հասկնա՞ս Արդեօք”
2. “Ինչպէ՞ս Զէք Հասկնար”
3. Բրիստոնէութեան Իմաստաւորեալ Ըմբռնումը
4. Բրիստոնէութիւնը Ինչպէ՞ս Ըմբռնել
5. Սակայն, Զճանչցան Թէ Յիսուսն Էր Ան
6. “Ատով Ամէնը Պիտի Գիտնան Թէ Դո՛ւք Իմ Աջակերտներս Էք”
7. Սիրոյ Տրամաբանութիւն

**"HOW CAN I, EXCEPT SOME MAN
SHOULD GUIDE ME?"**

**ԱԼՊԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2007**

“ԿԱՐԴԱՅԱԾԴ ԿԸ ՀԱՍԿՆԱ՞Ս ԱՐԴԵՕՔ”

Առաֆ. Ը. 30

Անլուելի և յաւերժալոյս հարցումը որ կու գայ հոգեշարժ առաֆեալ Փիլիպպոսէ լուսաւորելու սեւամորթ ափրիկեցիին աստուածաֆաղց հոգին: Ստեղծագործ Արարչին բարի կամեցողութեան, որ փարատեց տիեզերական թանձրացեալ խաւարը և ծագեց կենսապարգել և լուսաձիր Արելը:

Վերոյիջեալ հարցումը, *“Կարդացածդ կը հասկնա՞ս արդե՞տ”* խօսքերը յունարէն բնագրին մէջ խորհրդանշական իմաստներով հասկնալի է: Սոյն համարը իր բազմիմաստ նշանակութեամբ նաեւ կը թարգմանուի, *“Այ՛ճով կարդացածդ, սրտով և հոգիով կը հասկնա՞ս արդե՞տ”*: Ճէյմզ Մօֆֆաթ՝ խորահմուտ Աստուածաշունչի թարգմանը հետեւեալ կերպով կը վերծանէ յուն. բնագիրը. *“Do you really understand what you are reading”*. Այսինքն՝ *“Կարդացածդ իր՞տ և ստուգի՞ս հասկնալի՞ է”*:

Լեզուն՝ *խօսե՛ջ* որ գեղարուեստական գրականութեան բանագրնաց միջնորդն է, և իր հոյակապ բանաստեղծութիւններով երկնասլաց մարգարեութեամբ և բարձրաթոյիջ խոյանքով կրնայ հասնիլ վեհ բարձունքներու, սակայն կանգ կ’առնէ աննիւթական և հոգեկան խորհուրդի սեմին: Ինչո՞ւ:

Որովհետեւ.

Խորհուրդը՝ ինքնին, նման է բաղադրեալ լոյսի, երբ անցնի պրիսմակէ մը, ան կը բազմանայ և ըմբռնողութիւնը կը ջփոթի թէ սոյն գոյներէն ո՞ր մէկը լոյսն է: Համանման կերպով՝ հոգեմատեան գրականութեան խորհուրդի սեմին, մարդ երբ իմաստասիրական կամ կրօնական գրականութեան իմաստը կորսնցնէ՝ կորսնցուցած կ’ըլլայ հոգեկան ապրումներու ու նաեւ առաջնորդող իմաստին նշանակութիւնը և ճանապարհը:

Լեզուն՝ իր բառերու թերութեան պատճառաւ երբեմն երկդիմի իմաստներով կը տպաւորէ ընթերցողին մտածողութիւնը: Այսպիսի անել կացութեան առջեւ, *“Ին՞չը, Ճշմարտութեան Հոգին, պիտի սորվեցնէ ձեզի բովանդակ Ճշմարտութիւնը”* կը խոստանայ Յիսուս Յովհաննու Աւետարանի ԺԶ.13 համարներուն մէջ:

Ս. Հոգին՝ Յիսուսի սկսած գործը կը շարունակէ, սորվեցնելով և յայտնելով *բովանդակ Ճշմարտութիւնը* և անոր կիրարկումը: Հետեւաբար աստուածայայտնութեան ջրջանը չէ աւարտած, այլ կը շարունակէ դարէ ի դար մինչեւ վերադարձը Յիսուս Քրիստոսի:

*“Կարդացածդ կը հասկնա՞ս արդե՞տ”*ը լուսաշաւիղ նետացոյց

մը ըլլալու է բոլոր անոնց որ կը կարդան Սրբազան Մատեանը: Ոչ թէ կարդալ, կարդալու սիրոյն և գոց սորվիլ, թէեւ յոյժ օգտակար է ասիկա, սակայն ընթեռնուլ *հասկնալու* նպատակաւ:

Յիսուսի չորրորդ երանելիի դասակարգին կը պատկանի Եթովպացի ներքինին, որ նաեւ գանձապահն էր իր երկրի Կանդակա թագուհիին: Այս խափշիկին սեւ մորթին ներքեւ կը գտնուէր սպիտակ և լուսեղէն հոգի մը որուն սիրտը *“Բարցն ու Ժարախ էր արդարութեան”*: Լսենք աղերսը այն հոգւոյն որ կը ջանայ Բողազերծել բառին և գիրին տակ թափնուած իմաստը՝ *“Ինչպէ՞ս կրնամ հասկնալ, եթէ մէկը չ’առաջնորդէ զիս”*: Ան կը խնդրէ Փիլիպպոս սարկաւազէն որ իր Բովը նստի ու մեկնաբանէ իրեն մարգարէաշունչ մատենագրութիւնը:

Այսպիսի հոգեհրաշ և հոգեզմայլ ճանապարհի՛ն Ա. Մեսրոպ Մաշտոց ձեռք բերաւ հայ գիրերը: Հոգեբուխ որոնումի ճամբո՛ւն մէջ Ա. Գրիգոր Նարեկացին բանահիւսեց աղօթագիրք մատեանը: Հոգեպարար և հոգեշունչ վերացումի պահերուն Ա. Ներսէս Ծնորհալի ստեղծագործեց և վստահեցաւ Հայ ցեղին՝ հոգեւոյս ծարականներն ու երաժշտութիւնը:

Անցեալի այս տիտան հայ հաւատացեալները զոհեցին ամէն ինչ ճանչնալու զԱստուած և հասկնալու Անոր կամքը: Սրբազան Մատենագրութիւնները չի գրուեցան թութականաման կարդալ արանց հասկնալու և միայն կրկնելու համար: Առաքեալներն ու իրենց յաջորդները ի՞նչ նուիրումով գրեցին և աւանդեցին հոգեպատում մարգարէութիւնները մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի: Ոչ թէ որպէս ցուցադրութիւն պատերու վրայ, այլ՝ որպէս կենդանի՝ *ապրում* իւրաքանչիւր հաւատացեալի կեանքին և սրտին մէջ:

Այս պատճառաւ Փիլիպպոս կը հարցնէ Եթովպացի ուխտագրնացին, *“Կարդացածդ կը հասկնա՞ս արդեօք”*: Դարե՛ր առաջ պատահած սոյն հարցումը, իր Բնբուշ մեղեդիով կը կրկնուի Բեգի և ինձի, հաւատակից եղբայր և Բոյր: Կեանքի մեր ուղեւորութեան ճանապարհին: Իմացա՞ծ ենք աստուածային Ջայնը, հասկցա՞ծ ենք Անոր Խօսքը, իմացած և փոխանցա՞ծ ենք զանոնք մեր զաւակներուն ու նաեւ ուրիշներուն:

Եթէ ոչ.

Կը փափաքի՞ս հիւրընկալել Սուրբ Հոգին, կամ Անոր ուրիշ հոգեւոր մեկնաբանող օգնականը, հոգ չէ որ անունը չըլլայ Փիլիպպոս, սակայն պաշտօնն ու կոչումը նման է Փիլիպպոսին:

Խնդրէ՛ Յիսուս Քրիստոսէ՛:

Հոկտ. 19, 1989

Թորոնթօ

“ԻՆՉՊԵՍ ՉԷՔ ՀԱՍԿՆԱՐ”

Յիսուս Զրիստոս իր առաքելութեամբ Բարոզեց Աստուծոյ թագաւորութիւնը, Իր հօգօր հրաշագործութիւններով ջարժման մէջ դրաւ այդ թագաւորութեան ներքին արտայայտութիւնը և բոլոր անոնք, որոնք ունէին ըմբռնողական սրտեր դարձան բաժնեկից Իր յայտնութիւններուն: Հաւատքի ջահն է, որ կը լուսաւորէ իրերու և երեւոյթներու հասկացողութեան խորքը: Մակայն ոմանք ձգտում մը ունին իրենց հաւատքը վերածելու՝ իմաստասիրութեան իրենց նախապաշարեալ հասկացողութեամբ:

«Եղան անշուշտ որոշ ջրջաններ և որոշ տեղեր պատմութեան ընթացքին, երբ եկեղեցական ղեկավարներ զոհ գացին ընկերութեան վերին խաւերուն յատուկ փորձութեանց և իրենք ալ ջահագործեցին մարդ էակը արհամարհելով անոր մարդկային իրաւունքներու աստուածատուր արժանիքները: Բայց այդ բոլորը չեն պատկանիր Բրիստոնէական կրօնի էութեան, այլ անոր սխալ հասկացողութեան և ջահագործումի մարդկային սկարութեան»

--**Գորեգին Բ. Կաթողիկոս**- -«Հասկ» 1968: Զարտուղի դրոյապատճառներով և գործելակերպով:

Եկեղեցին մեր կեանքին մէջ ապրող ոգի՛ն դառնալու է, հաւատք, բարոյական հասկացողութիւն, և կեանքի ըմբռնողութիւն: Հաւատքը պէտք է վերածնի մարդու մէջ որ ան դառնայ իրականին ու ճշմարիտին հասկացողութիւնը: Մարդ արարածին իսկութեան և էութեան մէջ կայ խորհրդաւոր անձնականութիւն մը, որ կարիքը ունի հասկնալու Գերբնականը: *«Հասկնալ*, կրօնական իմաստով կը նշանակէ հաղորդուիլ, հոգիով մասնակցիլ այն գօրութեան, որ աստուածայինին ներկայութիւնն է: "Հասկնալ" բառը, կրօնքի մէջ չի նշանակեր միայն բառերը իրենց յղացական, իմացական և ստուգաբանօրէն ըմբռնել, այլ առաւելաբար թափանցել անոնց ներքին իմաստին, որ յաճախ *խորհուրդ* է և մատչելի միայն հոգեկան հաղորդակցութեամբ, և ոչ իմացապէս ըմբռնելի, այսինքն՝ տրամախոհական մօտեցումով հասկնալի»

--**Գորեգին Ա. Կաթողիկոս**:

*Կատարել ճշմարտութիւնը, ո՛չ սոսկ զայն մտնով
հասկնալ, խօսնով արտայայտուիլ, գիրով դրոշմել,
այլ՝ կեանքով և գործով ապրի՛լն է:*

Ի՞նչ ըլլալու է Բարոզութիւնը, եթէ ոչ

բացատրութիւնը

Աստուծոյ Խօսքին: Մինչեւ որ Աստուծոյ խօսքը չի բացատրուի, մեր կեանքը չի կրնար փոխակերպուիլ: *«Այն աստն Յիսուս անոնց մտերը բացաւ, որպէսզի հասկնան գործածները»*--Ղուկ. ԻՂ.45:

Ո՞ր կը կը սկսի հասկնալ ճամբան:

«Այն առաջին օրէն ի վեր որ բու սիրտդ տուիր հասկնալու և բու Աստուծոյդ առջեւ բու անձդ խոնարհեցնելու, ... եկայ որպէսզի ... բու ժողովուրդիդ ինչ ըլլալիքը բեզի հասկնեմ»--Դան. Ժ.12, 14: «Բնաւ ամբարիշտ մը պիտի չի հասկնայ, հապա իմաստունները պիտի հասկնան»--Դան. ԺԲ.10: Կ արդա՛նք՝ Դանիելի մարգարեութիւնը ոչ թէ կարդացած ըլլալու համար, այլ կարդանք հասկնալու՝ համար՝ մտադրութեամբ սերտելով: Տրդատ թագաւորի շրջանին հայ թարգմաններ կային, որոնք եկեղեցւոյ ամէն մի վարդապետութիւն և խորհուրդ հասկնալի կ'ընէին ժողովուրդին, իսկ այսօ՞ր...: Նարեկացին ըմբռնելու և անոր բովանդակութիւնը հասկնալու համար, ընթերցողէն կը պահանջուի հոգեւոր ուժերու բացառիկ սեւեռում: Լոկ կամեցողութիւնը բաւարար չէ Աստուծոյ խօսքը հասկնալու, այլ՝ անոր *գործադրումն* ալ պէտք է:

Զարոգը, արարողութիւնը և Ա. Պատարագը երբ չի բացատրուիր ժողովուրդին, Յիսուս կ'ըսէ.

«Դուք երկրպագութիւն կ'ընէք անոր գոր չէք ճանչնար, իսկ մենք երկրպագութիւն կ'ընենք Անոր գոր կը ճանչնանք»--Յով. Դ.24:

Եղովպիացի ներքինին դարձաւ և Փիլիպպոս սարկաւագին ըսաւ. «Ինչպէ՞ս կրնամ հասկնալ, եթէ մէկը ինձի չի բացատրէ»-- Առաք.Ը.31: Եկեղեցին պարտաւոր է բացատրել այն բոլոր իրողութիւնները որոնք մեր Բրիստոնէական կեանքը կը հարստացնեն: Յիսուս, չի բացատրուած, չի պատճառաբանուած բան մը չէ ձգած, եթէ ընդունակութիւնն ունիս տեսնելու, լսելու, զգալու, մտածելու և տրամաբանելու:

Աստուածաբանութեան նպատակը բացատրել է հոգեկանը և անջօջափելին, սակայն բացատրութիւն մը երբեք հաւատքի պաշտօնը և դերը չի կատարեր, միայն կ'օժանդակէ: Հրաջֆները բացատրութիւն չունին, եթէ ունենային՝ արդէն հրաջֆ չէին ըլլար: Յիսուս Բրիստոս ոչ միայն ճշմարտութեան Վարդապետ մը, այլ տիպար նմոյշ մը և *ապրող* Բացատրութիւն մըն է: Բրիստոս Ի՛նքն է մեր հասկացողութեան գերագոյն Հեղինակութիւնը:

Բաւերը, գրաւոր կամ բերանացի բաւարար չեն լեզուին իմաստը իրենց անվրէպ էութեամբ բացատրելու, հարկաւոր է Սուրբ Հոգւոյն լուսաւորումը: Յիսուս Բրիստոս սուկ աննման Մա՛րդը չէ՛:

Մեր ըմբռնումը կը գոյանայ գիրին և գիրեն անդին հոգեկան բխումներու ճամբով:

1. Վերոյիջեալ անձնաւորութիւնը կրնայ փիլիսոփայի՞ն վեհ անձը ըլլալ:
2. Սոկրատ նշմարել տուաւ՝ հոգիին մատչելի լուսաւոր բարձունքները, ջրջեց բարոյականն ու օրէնքները իր ժամանակին:
3. Մովսէս դատապարտեց մեղքը և յանցնաբը:
4. Պուտտա զանազանեց չարն ու բարին. բայց թէ՛ Սոկրատի, թէ՛ Մովսէսի և թէ՛ Պուտտայի կը պակսի **բացարձակ** տիրական ոգին որով համակուած է Խօսքը Յիսուսի, որ **գո՛րծ** է միանգամայն:
5. Մարդոց երեւակայութենէն յառաջ եկած դիժերն ու չաստուածներն իսկ՝ իսամաճիկներ են՝ բաղդատմամբ Յիսուսի:
6. Յիսուս, աննման Մարդը, կատարեալ էակը, Աստուածորդի՞ն է:

Ամենէն հարցասէր միտքը գոհացնող բացատրութիւնները՝ **Խաչ եցեալի՞ն** լոյսով կը բանան իրենց դոները: Խոկալ և ըմբռնել Գողգոթայի հոգին, հաւատալ ու երկրպագել է ներում շնորհող Փրկչին: Յիսուս իրականացուց և ըմբռնելի դարձուց Հին Կտակարանի՝ մարգարէներուն Աստուածը մարդկային հասողութեան: Ո՛չ թէ մարդկայի՞ն նախապաշարումով, այլ Իր ապրումով, նուիրումով և անձնագոհ խաչելութեամբ ճշմարտապէս ցոյց տուաւ աշխարհամարդուն Աստուծոյ իմանալի և մարդասէ՛ր նկարագիրը:

Քրիստոնէութեան կարիքը **փոխակերպումն** է ենթակային անձնականութեան, անոր հոգեկան ըմբռնումներուն: Երբ մարդ կորսնցնէ Բացարձակին (Աստուծոյ) ըմբռնումը, ան կը կորսնցնէ նաեւ ճշմարիտին ու կեղծին, սուտին և ուղիղին իրականութիւնը: Եթէ մարդկային ըմբռնումը հանդէպ ճշմարտութեան ենթակայական և յարաբերական է, ուրեմն ի՞նչ է ճշմարտութիւնը, ի՞նչ կրնայ ըլլալ ուղիղն ու սուտը:

Յովհաննէս առաքեալ կը ներկայացնէ իր Վարդապետը Լոյս և Կեանք ջողակաթումի դիտանկիւնէն, որովհետեւ ան ճանչցած էր իր Վարդապետը աւելի խոր հասկացողութեամբ ու ջերմ սիրով: Ան ոչ միայն կը պատմէ, Աւետարանը համաշխարհի հաւատացեալներուն, այլ կը **նկարէ՛ և կը պատկերացնէ** իր Տիրոջ Յիսուսի պատմըւածքները:

Քրիստոնեային կեանքը և վկայութիւնը պէտք է աստուածակերպոն Բրիստոսահայեաց ըմբռնումով ըլլայ և ան ապրի՛ ա՛յն հաւատով ու ա՛յն Աստուծով, որ յայտնուեցաւ Յիսուս Զրիստոսի կեանքով ու Սուրբ Հոգւոյն վկայութեամբ:

Յուլիս 20, 2000 Թորոնթօ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԻՍՎՍՏԱԻՈՐԵԱԼ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Մարդիկ և ժողովուրդներ շատ նիւթերու ծանօթութիւն ունին՝ ազգային, մարզական, բարոյական կամ պատմական: Մակայն, մարդկութեան բոլոր գիտելիքները, ընդհանրապէս, մակերեսային, անճիշտ կամ նախապաշարեալ են: Ճշմարտութեան կորիզ մը կրնան պարունակել, բայց սովորաբար, առասպելական աւանդութիւններ են: Իմաստաւորեալ հասկացողութիւնները, այլ խօսքով, արժէքներու ըմբռնումները, որոնք բացատրուած չեն, կրնան կորսուիլ կամ այլասերիլ:

Օրինակ --

Ազգի մը զաւակները, որոնք անտեղեկ են իրենց ցեղին պատմագիտութեան, նուիրական հերոսութեան, և ցեղային արժէքներուն, *առէլի՛ դիւրա* օտար ամուսնութիւններ կը կնքեն Բան անոնք, որոնց ազգային և ցեղային խոր հասկացողութիւնը և հաւատքը՝ իմաստաւորուած են:

Եթէ կայ պատմագիտութեան մէջ ժամանակաշրջան մը ուր Հայ ազգին զաւակները պարտաւոր եղած պիտի ըլլան իմաստաւորել իրենց ցեղային և կրօնական հասկացողութիւնը՝ այդ ժամանակամիջոցը՝ մեր ներկայ դարն է: Ակտեալ **ա՛յս օրէն**: 20-րդ դարու հայութիւնը այլեւս լոկ ժառանգական ֆրիստոնեայ չի՛ կրնար շարունակել և գոյատեւել, այլ պէտք է **իմաստաւորու ա՛ծ և արժէ՛քաւորու ա՛ծ հասկացողութի՛ւն** ըլլալ:

Միևեւրոմ հայր կորսնցուցած է իր դարաւոր և պապենական հողը և սրբավայրերը, որոնք իմա՛ստ և ներշնչո՛ւմ կու տային իր ներաշխարհին: "Անլուրի Զանգակատան" ղօղանչը կը հրաւիրէր զիրենք աստուածապաշտութեան և Անոր հետ *հաղորդութեան*: Մինչ այսօր Արարատն ու Մասիսը, պատէն կախուած *նկարներ*, են լոկ և Ս. Էջմիածնայ աղօթականչ զանգակատունը փոխարինուած է մարմինը գրգռող **ճագ** աղմուկով:

Հեթանոս և իսլամ ժողովուրդներու խառն ովկիանին մէջ, հայ անհատը՝ ինքզինք ոչ միայն որպէս հա՛յ կը ճանչնար, այլ **Հայ-Քրիստոնեայ**: Հայը՝ ինքզինք որպէս ո՞վ կամ ի՞նչ կը ճանչնայ այսօր, Արեւմտեա՛ն աշխարհի և անոր այլասերած մշակոյթին մէջ: Բարոյական և առաքինի արժէքները ծաղր կ'ըլլան հեշտամուլ և առեստրական ջահամուրութեան և ազահութեան բազինին:

Ես հաւատաւորն եմ, որ հայ հաւատացեալը պիտի կարենայ

յարթահարել իր վրայ արջաւող ոչ Մոնկոլեան անասուած անբարոյութեան, եթէ մեր եկեղեցիներն ու այլ հիմնարկութիւնները իմաստաւորեն և բացատրե՛ն Հայ մտփին ու անոր հասկացողութեան Յիսուսի հաւատքը Աւետարանչութեան ճանապարհով: Փոխանակ ճաշարանային հացկերոյթներով և պարահանդէսներով: Ժամանակը ուշացած է, դարբնելու հայ նոր սերունդը նարեկացիներու և ծնորհալիներու կաղապարին մէջ: Հոգ է, որ անոնք ըլլան նորակերտ նարեկացի կամ ծնորհալի տեսքով, սակայն իսկութեան և էութեան մէջ՝ նոյնը այն Տիրոջ և Յիսուսին որով զոյգ առաքեալներ Թադէոս և Բարթողոմէոս դրոշմեցին մեզ Յիսուս Բրիստոսի Անունով:

Դեկտեմբեր 1, 1992

Թորոնթօ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԵ՞Ս ԸՄԲՈՆԵԼ

Քրիստոնեութիւնը հասկնալու և Յիսուսի զօրութիւնը ճանչնալու համար, ներկայ հաւատացեալներ, գիտակցելու են հաւատքի հնագոյն ենթահիմաստները ու նաեւ հեռանկարը: Օրինակ, Մովսիսական Օրէնքը, յունական դիցաբանութիւնը, հռոմէական և "բարբարոս" կոչուած հիւսիսաբնակ հեթանոսներու կրօնքը:

Հայոց աշխարհի իջիւանները և անոր Լոյս Հաւատքին ուխտաւորները՝ իրենց իսկ կեանքի արիւնով և դիւցազնութեամբ պաշտպան կանգնեցան Յիսուս Քրիստոսի ճամբուն և ճշմարտութեան: Միթէ անոնք սխալա՞ծ կը թուին այսօր: Իրենց բոլորանուէր գոհողութիւնը, արդեօք նախապաշարօ՞ւմ կամ պատրա՞նք սեպելու է:

Ո՛չ երբեք:

Պիտի գնահատենք և արժեւորենք մեր նախնիքները երբ անոնց հեռանկարի՞ն ընդմէջէն նայինք Յիսուսաջնորհ հաւատքին՝ մեր անխորտակելի հոգեւոր հայրենիքին և անխոցելի վահանին:

Նախ ճշդենք *Նմբոնեղ* բառին իմաստը: *Իմաստի՛ն՝ թափանցել, գիտակցի՛լ, հասկնալ և իմանալ* կը նշանակէ:

Քրիստոնեութիւնը ըմբռնելու համար, արդեօք պա՞րտ ենք դասաւորել զայն կրօններու հանգամանքին մէջ, թէ անկէ դուրս: Որովհետեւ "կրօն" բառը կը նշանակէ *կարգ, կանոն, օրէնք, վարդապետութիւն և հաւատարկիք*: Քրիստոնեութիւնը ունենալով հանդերձ վերոյիջեալ յատկանիշները, Ան առաւելապէս ունի նաեւ *"Ճնորհ"ի "Ճշմարտութեան" և Աստուածայայտնութեան* հանգամանքները, որ Զինք գերազանցօրէն բարձր կը դասեն քան այլ մարդակերտ կրօնները:

«Օրէնքը Մովսէսի ձեռնով արուեցաւ, իսկ ջնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի ձեռնով եղան»

Կ'ըսէ Յովհաննէս առաքեալ--Ա.17:

Յիսուս Քրիստոսի յայտնաբերած "Ճնորհք"ն ու "Ճշմարտութիւն"ը ոչ միայն հրէական կրօնը կը գերազանցէ, այլ բոլոր ազգաց կրօններն ալ: Գերման ժողովուրդներու մեծագոյն աստուածը Թայր (Tyr) պատերազմի՛ սիրահար էր: Հռոմէացիներու աստուածը՝ Արամազդ (Jupiter) աւելի պակաս տպաւորիչ չէ, որ կը ճանչցուէր որպէս երկնային-հոգի և իր գէնքերն էին ջանթերն ու կայծակները:

Յոյներ ջանացին մաքրագործել իրենց աստուածները:

Մոկրաս, Պղատուն և Արիստոտել իմաստասերներ փորձեցին սրբագործել յոյն կրօնական հաւատալիքները և աստուածները ու զանոնք ներկայացնել ջանացին որպէս կատարեալ էակներ: Մտոյիկեան իմաստասերներ, իրենց աստուածները նկատեցին որպէս մարմնաւորումը աստուածային "բանին": Էփիփուրեանները բոլորովին մերժեցին աստուածները, ըսելով որ աստուածներու պէտք չունին իրենց հասկացողութեան մէջ:

Այս էր Միջին Արեւելի և Հռոմէական Կայսրութեան ներքեւ ապրող ժողովուրդներու մտայնութիւնը և հեռանկարը երբ երկնային Միածինը Ինքզինք նոյնացուց մարդու Որդւոյն: Մարդկային տենչանքն ու աղերսը առ աստուածներ՝ անպատասխանի մնացած էին, իսկ Մովսիսական Օրէնքներն ու մարգարէական առաքինութիւնները՝ ձեւապաշտական և ցուցամոլական արարքներ դարձած էին: Հեթանոս Հայաստանն եւս, վատասերած ու ապականած բարբերու պատկերացում մը միայն կը ներկայացներ:

Հոգեկան ու իմացական այսպիսի մթնոլորտի մը մէջ ծլաւ ու արմատացաւ Բրիստոնէութիւնը: Իր *սիրոյ և առիւնճող զոհողութեամբ* ան պանծացուց շնորհի և ճշմարտութեան դրօշը կետարներու պալատին վրայ:

Իր սկզբնական հերթին, Բրիստոնէութիւնը, սիրո՛յ ջարժում մըն էր ու ո՛չ խաչակրութիւն: Ուրիշ կրօններու նման բռնութեամբ կամ սպառնալիքով չտարածուեցաւ ան հռոմէական կրօնակին ներքեւ ապրող ժողովուրդներուն մէջ: Բրիստոնէութեան, կամ *Յիսուսի Ճամբան* (ինչպէս սովոր էին կոչել): Բրիստոնէութեան զօրութիւնը՝ *սիրո՛յ ու ծոցնութիւնն* էր: Կարեկցութիւն կար հաւատացեալներու միաբանութեան մէջ: Ահն ու կրակ կար անոնց հոգիներուն մէջ: Անոնք վհատած, դեգերած և ջուարած անձեր չէին: Ճամբանին կորնցուցած կեանքի անխարտէս ուղեւորները չէին անոնք, այլ հալածանքի ու տառապանքի ներքեւ անվեհեր, և աննահանջ հաւատաւորներ էին: Նմոյշ մը Պօղոս առաքեալի խօսքերէն.

*«Անա թէ ինչո՞ւ ես կը կրեմ այս չարչարանները, բայց ամօթ չեմ համարէր, որովհետեւ **զիտե՛մ թէ Որո՛ւ եմ հաւատացեր.** և վստահ եմ թէ Ան կարո՛ղ է իմ աւանդս պահել մինչեւ այն օրը»* -Տիմ. Ա.12:

Գիտակից, ինքնազոհ և անձնազոհ հոգիով ու վսեմ նպատակի համար, Ա. Գրիգոր Լուսաւորիչ ընծայեց իր կեանքը Տրդատ թագաւորի վրեժխնդիր ատեանին: Հայ պետութեան լուսաւորիչը

շաղախեց իր կեանքը, իր Տիրոջ խաչելութեան հետ, որ բառնա՛յ Արարատեան աշխարհի հեթանոս հոգին և ցոյց տայ Յիսուս Բրիստոսի պանծալի սերը:

Ա. Գրիգոր Լուսաւորիչ, բանտարկուած էր Խոր Վիրապի գնդանը, սակայն իր հոգին կը սաւառնէր արծաթափայլ Մասիսի գագաթը ոչ թէ ընդունելու համար անողորմ Օրէնքը Մինա Լերան, այլ լսելու Պայծառակերպութեան Լերան յուսադրիչ հրաւերը, որ կ'ըսէր.

**«Այս է իմ սիրելի Արդիս, որուն էս հաճեցայ.
Անոր մտիկ ըրէ՛ք»--Մատթ. ԺԷ.5:**

Գրիգոր Պահլաւունիի մարմնական տառապանքները, հետեւանք էին վիշապադեւերու հետ իր մարտնչումներուն:

Ա. Գրիգոր Լուսաւորիչ, գէնֆի ուժով և վայրագ խաչակրութեամբ չէ՛ որ Տրդատեան Արարատի ֆաղափակրթութիւնը շահեցաւ Բրիստոսի, այլ Յիսուսի շնորհով, Անոր գթութեան ու ողորմութեան վայելչութեամբ յաղթահարեց ատելութիւնն ու հեթանոս վրէժխնդրութիւնը ու պանծացուց **անյիշաչ արութիւնը:**

Ան լուսաւորեց ճշմարտութեան և յաւիտենական կեանքի կանթեղը, միացնելով ինքզինք Յիսուս Բրիստոսի անսպառ Խղին որպէս պատրոյգ այրուելով ու դառնալով զոհակիցն ու խաչակիցը իր Տիրոջ Յիսուս Բրիստոսի:

Հեթանոս ջատագովներ, գագանային ու ծիւղային արիւնահեղութեամբ տարածեցին կոապաշտութիւնը և փորձեցին լուծեան դատապարտել Յիսուսի՛ Եկեղեցին: Բրիստոնեայ Եկեղեցի՛ն ալ թափեց արիւն, բայց ո՛չ ուրիշին արիւնը, այլ **ի՛ր** արիւնը: Ան ոռոճեց կրկեսներու սալաշատակը և հանդիսատեսներու մտերն ու խորհուրդները իր նահատակութեամբ: Զինք չարչարողներու գիտակցութեան ներքին առանձնարանին մէջ ան դրոջմեց Յիսուսի սիրո՛յ և ողորմութեան սերմերը: Յիսուսաբոյր սերմերը աւելի զօրե՛ղ հանդիսացան քան հոռմէական նիզակն ու սուրը երբ վերջապէս հոռմէական դրոջն ու արծիւր խոնարհեցան Խաչեցեալ Յիսուսի առջեւ յար և նման հոռմէացի խաչգամող հարիւրապետին

Երկնապարգեւ ծնորհի, ողորմութեան և ճշմարտութեան միջոցաւ, Արարատեան դաջտի Արմէնները ըմբռնեցին Բրիստոնեութեան **ոգին**: Միրոյ ու կարեկցութեան սոյն սերմե՛րն էին որոնք ջրուելով ծիլ տուին Ա. Մեսրոպ Մաջսոցներու, Ա. Սահակ Կաթողիկոսներու, Ա. Գրիգոր Նարեկացիներու, Ա. Ներսէս ծնորհալիներու և այն անթիւ սուրբերուն, որոնք իրենց կեանքի ճանապարհին

չ'ուրացան Գողգոթան: Անոնք վեհանձնօրէն և արիաբար դրին իրենց ուսը այն Խաչը որ Յիսուս կրեց: Որովհետեւ իրենց հոգւոյն գաղտնաթափանց աչքերը տեսած էին "Ճշմարտութիւնը, Ճամբան և Յաւիտենական Կեանքը»:

Հայ պետականութեան և ազգին դէպի Բրիտանացի դարձը, պատահական երեւում մը, կամ դիպում մը չէր, այլ ծրագրուած և նպատակաուղղուած առաքելութիւն մը երկինքէն: Ներկայ Հայ սերունդը՝ հայրենի հողի կամ սփիւռքի տարածքին, տէ՛րն է այս ժառանգութեան--Յիսուսաբոյր Բրիտանական հաւատքին:

Հայ նոր սերունդը ի՞նչ պիտի ընէ իրեն աւանդ թողուած երփնագեղ ու գոհարավառ հաւատքը: Արդեօք գրաւափոխի՞՞ (pawn broker)ի մը պիտի յանձնէ իր դարաւոր հաւատքը, փոխանակելու համար ժամանակաւոր գրգիռն ու հեշտանքը: Նիւթին հեղինակութիւնը երբեք լոցնելու չէ՛ Բրիտանական հաւատքի գերազանցութիւնը: Դարեր շարունակ, Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգախօսը եղած է Յիսուս Բրիտանի հաւատքը: Հայ ժողովուրդը իր արեա՛ն գնով, ազգային մշակոյթի և ժառանգութեան վերածած է Բրիտանի ճշմարտութիւնները:

Մեր Տէրը Յիսուս Բրիտոս, ազնուական զգացումներ արթնցնելով զգաստութեան կը հրաւիրէ Իրեն հետեւող հաւատաւորները:

Ըմբռնելու համար Բրիտանութիւնը և ճանչնալու համար Յարուցեալ Բրիտոսը, 21-րդ դարու հայ ժողովուրդը պարտաւոր է աղօթքի հոգիո՛ւմ մտնել հոգիի գաղտնաբաններուն ընդերքը, տեսնելու համար Յիսուս Փրկիչը դէմ առ դէմ, որպէսզի կարողանայ ճանչնալ ինքզինքը, սանձահարել իր հեշտ մղումները և արժանանալ Հայ Եկեղեցւոյ հաւատարիմներու ջարքին-

Աստուծո՛յ որդեգրութեան:

Մարտ 11, 1988

Թորոնթօ

ՍԱԿԱՅՆ, ՉԻ ՃԱՆՉՅԱՆ ԹԷ ՅԻՍՈՒՍՆ ԷՐ ԱՆ

Մագիթադենացին որ տաղտկալի վարձկան դպիրներու շրջանակէն դուրս գտած էր ներում շնորհող Մարդասէր և կեանք բաշխող Աստուածորդին, յարութեան գերապայծառ առաւօտուն, գերեզմանի շուշաններուն մէջ չի ճանչցաւ Յիսուսը:

Էմմաուսի ճամբուն վրայ երկու աջակերտներ որոնք մասնակցած էին հինգ հազարի հացկերոյթին, որ սպասարկուած էր երկնային հրեշտակներու միջոցաւ, չի ճանչցան թէ իրենց հետ քալող այդ Օտարականը՝ Յիսուսն էր, կեանքի Հացը և սիրոյ Վարդապետը:

Յարութեան յուսադրիչ յաղթանակէն յետոյ՝ եօթը աջակերտները՝ մէջն ըլլալով Պետրոս, չի ճանչցան որ Կափառնայումի լճակին մօտ կայնած մարդու կերպարանքը Յիսուս Ինքն էր:

Յիսուս միայն Իր վաղ անցեալի աջակերտներուն չի վերապահեց, Իր յայտնութիւնը, այլ՝ Ան կը շարունակէ Ինքզինք յայտնել մարդկութեան բնան դարեր շարունակ: Յիսուս կ'ուզէ յայտնուիլ եկեղեցիին ու կղերականին, բանուորին և աշխարհականին, մտաւորականին և շինականին, անխտիր:

Վերջին ճաշկերոյթն է այս որ Յիսուս պիտի սարքէ Իր եօթը աջակերտներուն ծովագերքը, աւագին վրայ: Այն լիճին եզերքէն ուր կանչած էր զանոնք Իր մօտ երեք տարիներ առաջ, դրկելու զանոնք ծովաշխարհ մը, ուր փոխանակ ձուկեր որսալու, պիտի որսան մոլորածները և կեանքի արկածեալները, փոխանակ իրենց որսացածը մահացնելու՝ պիտի ապրեցնեն: Գալիլիոյ ծովուն ալիքները որ զիրենք վախցուցած և սարսափեցուցած էին՝ աշխարհածովի ալիքները զիրենք պիտի սրտապնդեն ու քաջալերեն: Կեսարներու և հզօրներու սպառնալիքները զիրենք այլեւս պիտի չի զարհուրեցնեն: Որովհետեւ այլեւս միայն մարդ չեն, այլ՝ մարդ և առաւել Աք. Հոգի: Պէնտեկոստէի օրուն մկրտութիւնը, զիրենք դարձուցած է մարմնեղենէ դէպի հոգեղէն և աստուածային: Այս հացկերոյթէն վերջ, Յիսուս փոխանակ ըլլալու իրենց *հետ*, պիտի ըլլայ իրենց *մէջ*:

Յիսուս կը յայտնէ Ինքզինքը հացկերոյթի մը տեսողութեան կամ Կանայի հարսնիքի մը ընթացքին: Մարմնական և նիւթական տօնախմբութեան մը առթիւ: Կարծես ինքնաշայտնութիւնը անձնագոհութեամբ կ'ըլլայ: Ինքզինքը նուիրելով, փջրելով և ուրիշներու բաժնելով անձ մը կրնայ իր ինքնութիւնը յայտնագործել: Միթէ

նոյնը չե՞ն ըրած նաեւ մեր ծնողներէն ջատեր: Իրենք չեն կերած որպէսզի ուրիշներ չ'անօթենան: Իրենց այս անձնուրացութեամբ է որ սիրաջահած են սրտերը իրենց հարազատներուն:

Մեր Տիրոջը խաչելութենէն առաջ, Յիսուս միայն մէկ տեղ կրնար գտնուիլ նոյն ժամուն, իսկ յարութենէն յետոյ, Յիսուս ամէն տեղ է միեւնոյն ժամուն: Ոչ թէ Յիսուս Ինքզինք կը ծածկէ մեզմէ, այլ՝ մե՛նք ենք որ Զինք չենք տեսներ: Մե՛նք Զինք չենք ճանչնար, որովհետեւ մեր սպասումը և ակնկալութիւնը *տայրեր՛ր Յիսուս* մը տեսնել է:

Մենք տեսնել կ'ուզենք *ազգայի՛ն* Յիսուս մը, Բողոքական Յիսուս մը, յարանուանական Յիսուս մը: Յիսուս մը մե՛ր նախապաշարումի կերպարանքովը, մե՛ր տեսանկիւնի վարդապետութեա՛ն յարմարող Յիսուս մը: Յիսուս մը որ նմանի մե՛ր երազին ու ակնկալութեան փոխանակ մե՛նք նմանելու Ի՛ր կերպարին և Ի՛ր նմանութեան:

Որքան ժամանակ որ մենք անձնասիրական Յիսուս մը կը փափաքինք տեսնել կամ ունենալ՝ Ճշմարիտը, Իրականը և Յարուցեալը պիտի չի ճանչնանք: Նախ քան տեսնելնիս մեռելներէն Յարուցեալը, մե՛նք կարիքը ունինք յարութիւն առնելու մեր *նախապաշարումներէն*: Աստուծոյ Թագաւորութիւնը, Նիկողիմոսի նման տեսնելու համար, պարտաւոր ենք "նորէ՛ն ծնանիլ": Յիսուս հետաքրքիր մտեր գոհացնելու նպատակաւ Ինքզինք չի յայտնեց, այլ՝ Իր դիտաւորութիւնն էր առաքեալներ և վկաներ ուղղարկել մարդաշխարհ: Իր Աւետարանին դեսպաններ և պատուիրակներ դրկելու դիտումով յայտնուեցաւ Զինք սիրողներուն: Կամաւորներ և անձնուրաց կտրիճները տեսան Զինքը: Իսկ Բահանայապետներու, Բաջ ու վատասիրտ վախկոտներ, Պիղատոսներու և դպիրներու նման, պիտի տեսնեն Զինք, միայն Դատաստանին Օրը:

Յիսուսը տեսնելու համար պարտաւոր չես ճգնաւոր մը կամ վանական մը ըլլալ. կամ առանձնանալով և անջատուելով մարդկային ընկերութենէն ապրիլ մենակեաց:

Յիսուս՝ Ի՛նք քուն *հացկերոյթն* է, մարդկային իրական կեանքին մէջ: Մեր *տուրեայ* ապրումին մէջն է որ պիտի տեսնենք Զինքը: Ինչպէս Մագթաղենացին իր սուգին մէջ, իր հոգեկան տագնապին և յուսահատութեան մէջ տեսաւ Յիսուսը: Կողովպա և իր ընկերը ճամբորդութեան մը ընթացքի՛ն տեսան Յարուցեալը: Պետրոս և իր վեց ընկերները ձկնորսութեան, իրենց աւօրեայ գործին մէջ, իրենց արհեստանոցի՛ն գործունէութեան մէջ տեսան և ճանչցան Վերակենդանացած Յիսուսը, իրենց սիրած Տէրը:

Իսկ մենք կեանքի ճանապարհին վրայ, ճամբորդներուն աղմուկին, գետնի փոշիին, քրտինքի և մարմնական յոգնութեան մէջ պիտի կարենանք տեսնել Անպարտելին:

Մարդկային փորձառութեան ամենաչափասուած պահուն և տեղւոյն մէջ կարելի է տեսնել և ճանչնալ Յիսուսը: Այս է աստուածային հրաշք կոչուածը և Սֆանչելիին արժէքը: Դիտե՛նք մեր ջուրջը, հո՛ն պիտի նշմարենք Յիսուսի կերպարանքը՝ որ եկած է Ինքզինք մեզի յայտնելու: Հո՛ն մեր կեանքի քազմախաչ ճանապարհին վրայ քանի՞-քանի՞ անգամներ հանդիպած ենք Անոր: Մակայն մենք կարծած ենք Ձիւն տեսնել որպէս պարտիզպան, կահագործ կամ ճամբորդող օտարական մը: Իրեն հետ չենք խօսած, Իրեն հարցումներ չենք ուղղած: Ուզած ենք անտեսել խոյս տալ իր ընկերակցութենէն: Յիսուս մեր բնակարաններէն ներս չենք ընդունած որովհետեւ օտարական մը, անծանօթ մը կարծած ենք զԱյն: Միջոտ օտարական մը սեպած ենք, ու այսպէսով ոչ ճանչցած ենք Ձիւն և ոչ ալ գիտցած մեր Յարուցեալ Տէրը:

***Ժամադրուած ենք Իր հետ, միայն ժամ մը,
Կիրակիէ Կիրակի Եկեղեցիէն ներս:***

Գալով մեր առօրեայ արեւտրական ասպարեզի պղտոր գործունէութիւններու ձեռնարկներուն, չենք համարձակած Ձիւն հրաւիրել մեր գրասենեակները: Չենք ուզած տեսնել Ձիւն մեր գործերուն և հաշիւներուն մէջ, մեր առեւտուրին և շահամոլութեան մէջ ու մեր կեղծաւորութեան և ազահութեան մէջ: Որովհետեւ դրամի և սատանայի աղբին կը "փոխենք աղբատներու համբերութիւնը, կոյսերուն գեղեցկութիւնը և գերիներուն քրտինքը":

Չենք ուզած անսալ Վարդապետին ձայնին որ մեզի թելադրութիւն ընէ թէ ո՞ւր պէտք է նետել մեր ունկանները: Մենք աւելի լաւը գիտենք, մենք արուեստագէտ վաճառական ձկնորսներ կը համարենք մենք զմեզ ու պէտք չենք զգար անսալ ծովեզերքը կայնած Անծանօթի մը յորդորանքին և թելադրանքին:

Ահա այս պատճառաւ շատեր, թէեւ տեսած են Յիսուսը սակայն չեն ճանչցած Ձիւնքը: Չեն կրցած ճանչնալ Յիսուսը իրենց տեսած դրացիին, ճամբորդին, օտարագգիին և կարօտեալին մէջ որ գորովագութ հայեացքով իրե՛նց նայած է ոչ թէ բան մը առնելու ակնկալութեամբը, այլ՝ կեանքի Հացը և անմահութեան Ջուրը տալու իրենց:

Մտրա 31, 1987--Թորոնթօ

“ԱՏՈՎ ԱՍԷՆՔԸ ՊԻՏԻ ԳԻՏՆԱՆ

ԹԷ

ԳՈՒՔ ԻՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՍ ԷՔ”

Աստուած՝ բոլոր կրօններու սկզբնական և հիմնական հարցը և նիւթն է: Կրօնը համամարդկային երեսոյթ մըն է՝ ներգգացական թափուն խորհուրդը Աստուծոյ: Մտածող, զգացող, որունող հոգին կը հարցնէ. *«Ինչո՞ւ կ'ապրիմ, ո՞ւր կ'երթամ, ի՞նչ է կեանքի էութիւնն ու նպատակը»:* Արուեստն ու գիտութիւնը պատասխան մը չ'ունին, որովհետեւ կրօնական տեսութիւնը փաստարկութեամբ կամ նիւթական շօշափելիութեամբ ապացուցանելի չէ, այլ՝ ներհայեցողական և հոգեւտեսական փորձառութեամբ միայն իմանալի և գիտակցելի է:

Ի՞նչ է Զրիստոնէութեան հիմնանիւթը, կորիզը կամ առանցքը, որ կը զատորոշէ Յիսուսի հետեւողը այլակրօն հաւատաւորներէ: Ի՞նչ պարտ է ըլլալ Զրիստոսի աշակերտին բնոյթը կամ բոյրը՝ զինք բնորոշող և յատկանշող առանձնաչափութիւնը:

Տիեզերքի համակարգային յայտնաբանութիւնը նման է անվերջանալի գոյացութեան մը տեսիլքին, որ կը հոսի դէպի Աստուածային էութեան: Այս անսպառ հեղումը, մեր Տէրը Յիսուս Զրիստոս խորհրդանշած է որպէս **Սէր**:

Արեւելքի կրօնական հիմնադիրները գրած են ու տուած բազմաթիւ օրէնքներ ու պատուիրաններ, սկսեալ Համուրապի Բահանայապետ արքայաիջիանէն: Մարդեղացեալ աստուած Որդին տուաւ մի միայն *մէ՛կ* պատուիրան.

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի, որ սիրէ՛ք զիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէ՛ք զիրար: Եթէ դուք զիրար սիրէ՛ք, ասով պիտի գիտանան թէ դուք իմ աշակերտներս է՛ք»--Յով. ԺԳ.35:

Յիսուս Զրիստոս, *«Յարնաբանեայ Պատուիրանը»* տասնմէկի չի վերածեց, այլ **նո՛ր** պատուիրան մը տուաւ աշխարհին: *«Նոր գինին նոր տիկերու մէջ կը դնեն»* ըսաւ Ան--Մատթ. Թ.17: Յիսուս Զրիստոս Հին Ուխտի օրէնքներն ու պատուիրանները **նորին** հետ չի խառնեց: Լուսահանդերձ Նազովրեցին բարձրացուց մարդկութիւնը խաւարէն դէպի լուսաշող հասկացողութիւն, որուն *խտացեալ*

օրէնքն ու պատուէրը աստուածային **սիրոյ** գերագոյն արտայայտութիւնն է հանդէպ տառապակոծ աշխարհի:

Նազովրեցի Մարգարէին *«Աստուկ պիտի գիտնանա՞ր, բացայայտօրէն ցոյց կու տայ **«գիրար սիրելւօր:***

Յիսուս Քրիստոս, սէր-ը սրբագործեց ու նուիրագործեց: Բարձրացուց զայն *անձնա-սիրութենէ՝ այլա-սիրութիւն և սեռայնասիրութենէ՝ ծառայա-սիրութիւն և զոհաբերութիւն:*

Սիրել՝ աննիւթական և անջօջափելի հոգեխառնում է: Սիրել՝ սրբագործել է չարիքը ներողամտութեամբ: Սիրել՝ մօտենալ և հասնիլ է Աստուծոյ ներկայութեան: Սիրել՝ ճշմարտութեան գերմարդկային ճամբան է և գաղտնիքը՝ Աստուծո՛յ նմանելու: Գողգոթայի սարին վրայ՝ Խաչեցեալին սիրոյ զոհաբերութեամբ պատուեցաւ հազար տարիներու խաւարակուռ վարագոյրը յայտնաբերելու համար Աստուծոյ սէրը: Հռովեական անարգ ու նախատական խաչելութիւնը դարձաւ վիշտին սրբութիւնը, հաւատքին զօրութիւնը և սիրոյ ծննդագործող երկունքը Յիսուսայայտ զոհողութեամբ: Երկու սիրահարները իրար միացնող հոգեղէն կապը ո՛չ դղեակ է ու ո՛չ ոսկեղէն պալատ, այլ՝ ձգողական զօրութիւն մը որ ո՛չ նիւթականով բացատրելի է ու ոչ ալ շօջափելով, այլ հոգեզգաց յափշտակութեամբ մը միայն:

Տունը և տան կարասիները, անայլայլ ու ներդաշնակ **սիրոյ** մը՝ աննիւթական և անջօջափելի արդիւնքը պէտք է ըլլայ: Բազմադարեան ճախրանք արտայայտող հոյակապ ուխտավայրերու և եկեղեցիներու օղակաւորումը, հայրենիք մը կամ գաղութ մը, անպատճառ քրիստոնէական սիրոյ ապացոյցները չեն ներկայացնել, այլ կրնան ըլլալ նաեւ դրամատիրական կամ փառատենչութեան ունայնամտութիւններ: Կարգ մը փարթամ ու գեղեցկատեսիլ տուներու մէջ գահակալող ոգին ո՛չ սէրն է ու ո՛չ ալ միասնականութիւնը, այլ՝ տիրութիւնը, յուսահատութիւնը և անձնասպանութիւնը իբր հետեւանք:

Պատմութիւնը գրած ենք մեր սրբատեղիներուն և ուխտատեղիներուն, Աղթամարին, Անիի և Ս. Էջմիածինի: Կարծէ ակնարկ մը նետել Անի քաղաքին: Ան մէկուկէս ֆիլոմեթրով՝ մէկ ֆիլոմեթր տարածութեամբ քաղաք մըն էր, 100,000 հաջուող բնակչութեամբ: Տասներորդ դարուն՝ ան կը մրցէր Պոլիսի հետ, Պաղտատի և Գահիրէի հետ: Հազար ու մէկ եկեղեցիներ ունէր բազմազան ճարտարապետական գեղեցկութիւններով: Սակայն...

«Աճառու ներք փարթամացել էին տնանկները»

*Բրտիւնով, վաշխերով ու անիրաւութիւններով,
անողորմ էին աղֆատների հանդէպ, հանրած էին
մեղկ կեանքի, չէին խորշում կեղտոտ գործերից:
-- Հայկ. Հանրագիտարան էջ 408, Ա-ին հատր:*

Ինչո՞վ պիտի գիտնայ աշխարհ թէ մենք աշակերտներն ու հաւատաւորներն ենք Յիսուս Զրիստոսի: Ի՞նչ է Անոր հետեւորդներ և հաւատացեալներ ըլլալուն ապացոյցը: Եկեղեցակառոյց տաճարներն և աղօթասաց ուխտատեղիները: Ոչ երբեք, որովհետեւ անոնք կրնան կառուցուիլ անձնական փառքի և արուեստի սիրոյն անիրաւութեամբ շահուած դրամով: Անոնք կրնան դառնալ յիշատակարան և քանդակազարդուած յուշարձաններ վկայակոչելու խնկելի և անթաւամ յիշատակը մեր անցեալի հաւատին: Այսօր, Յիսուս Զրիստոս ապացուցանելի է մի միայն մեր ծառայասիրութեամբ և միասնականութեամբ: *«Միրեցէ՛ք զիրար ինչպէս ես ձեզ սիրեցի»*: Միրել է զիրար անյիշաջարութեամբ և ներողամբութեամբ:

Մեր բառը չէ ստեղծուած քարոզուելու և քանաստեղծելու համար, այլ՝ Յիսուսի պատուիրած սերը՝ *կիրարկուելո՛ւ* համար արտասանուեցաւ անսուտն ծրթներէ: Աստուածային ստեղծագործ Մերը խոնարհեցաւ (թանձրացաւ, մարդացաւ) աշխարհ, պարգեւելու սիրոյ իմացական կեանք մարդ արարածին: Նոյնպէս մարդ՝ ի՛նք եւս *բարձրանայո՛ւ* է դէպի տիեզերական Մերը և կեանքը՝ ուր պիտի գտնէ իր Արարիչը և Տէրը:

Այս խթանը և դիւցազնական խոյանքը դէպի Աստուած և մարդ, սեր բառին հղովումով չիրականանար, այլ՝ գոհաբերութեամբ ու նուիրումով: Ինչպէս կայ *մեռեալ* հաւատք, կայ նաեւ *մեռեալ* սեր: Մերը... Յիսուսի պէս չարջարուած, խաչուած ու թաղուած բառ մըն է, պարտ է զայն յարուցանել:

Միրոյ և յոյսի կազդուրիչ և ապաքինող ներշնչումի կարիքը ունին ներկայ եկեղեցիները, ընտանիքները և քաղաքական կուսակցութիւնները: Ապա թէ ոչ, մեր հայրենասիրութիւնը, եկեղեցասիրութիւնը և համակեցական սերը՝ *մեռեալ* կամ այլասերած սեր է:

Երկու հազար տարիներէ ի վեր յաղթանակած է Յիսուսի սերը կարգ մը հաւատացեալներու կեանքէն ներս: Ինչո՞ւ, որովհետեւ լուսաշող Յիսուս սիրեց մարդկութիւնը անհամեմատ հորիզոնով և խորացումով: Անոր սերը անհանգրուան է, անսկիզբ և անվախճան: Ան գիտցաւ, որ աշխարհի հետ խօսելու միակ լեզուն սե՛րն է:

Աշխարհի ներկայ գոյավիճակը պատրաստութեան և կարգապահութեան վարժութիւն մը ըլլալու է գալիք Աստուծոյ Թագաւորութեան, **ՄԵՐՈՅ** քաղաքացիութեան համար:

Սիրոյ և նուիրումի, գոհողութեան և անյիշաչարութեան լեզուն Յիսուս ջանաց սորվեցնել Իր աշակերտներուն: Հայրենասիրութիւնը, ընտանիքի սէրը և եկեղեցասիրութիւնը եթէ ընդելուզած չեն Յիսուս Բրիստոսի՝ սիրոյն մէջ, մեր սիրելու ջանքն ու ձգտումը պարզ ձեւակերպութիւն մըն է, չ'ըսելու համար կեղծաւորութիւն:

«Տէրոջը առջեւէն լեռները քակող ու ապտաժները կտորոտ մեծ ու սաստիկ հով եղաւ, բայց Տէրը այն հովին մէջ չէր. և հովին ետեւէն գետնաշարժ եղաւ, բայց Տէրը գետնաշարժին մէջ չէր. ու գետնաշարժին ետեւէն կրակ եղաւ, բայց Տէրը կրակին մէջ չէր. և կրակին ետեւէն մեղմ ու բարակ ձայն մը կը լսուէր: Եւ եղիա զանիցա լսածին պէս՝ իր վերայկրուովը երեսը ծածկեց, ու եղաւ քարայրին քերանը կայնեցաւ. ու ամա անոր ձայն մը եկաւ ու ըսաւ, «Այլ եղիա, հոս ի՞նչ բան ու նիս»--Գ Թագ. ԺԹ 9-13:

Եղիա մարգարէին սոյն փորձառութիւնը, որ պատահեցաւ Բրիստոսէ 900 տարի առաջ, ապացուցանելի բացայայտութիւնն է երկինքէն, թէ **աստուածային միջամտութիւնը «մեղմ ու բարակ ձայն»ով (սիրով)** կը գործադրուի ու ո՛չ գետնաշարժով կամ փոթորիկներով:

Խոնարհի՛նք Յիսուս Բրիստոսի անժամանցելի պատուերին.

«Դու՛ք ալ սիրեցէ՛ք զիրար» ին

առջեւ և ուխտենք դառնալ **սուրբ սիրոյ** ջահակիրները և հետեւորդները անպարտելի Յարուցեալին:

Նոյեմբեր 24, 1992--Թորոնթօ

ՍԻՐՈ՛Յ ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ

Կան մարդիկ, որոնք կը տրամաբանեն վախի՛ պատճառաւ, ուրիշներ՝ ազահուլթեան և անձնասիրական շարժառիթներով: Ծնչաւոր կենդանիներն անգամ կը տրամաբանեն, սակայն սահմանափակ չափով: Ծուն մը երբ կը զանազանէ իր տերը՝ թշնամիէ մը, գործածած կ'ըլլայ *ի/չ* տրամաբանութիւնը: Սակայն շուն մը չի կրնար իր տրամաբանութեամբ զանազանել *բարոյակա՛ն*, առափնութիւնը, գոեհիկ կենցաղավարութենէ: Ընտանիքի մը շատ սիրելի շունը՝ չի կրնար զանազանել գեղեցիկը տգեղէն:

Ուստի, ի՞նչ է տրամաբանութիւնը:

Տրամաբանութիւնը՝ ուղիղ դատելու հոգեկա՛ն կարողութիւնն է: Տրամաբանութիւնը ուղիղ մտածելու, արդարութիւնը և բարին հետազօտելու գիտարուեստն է:

Մարդկային տրամաբանութեան ասպարէզը այնքան տարածուն է, որ այս գրութեամբ կը փափափինք բաւարարել մենք զմեզ միայն *"Միրո՛յ Տրամաբանութեամբ"*:

Ինչո՞ւ "Միրոյ Տրամաբանութիւն"ը:

Մարդ-արարած որքան որ տենչացող մըն է հոգեկանին և աննիւթականին, հոն հասնելու յոգնութիւնը չո՛ւղէր ստանձնել: Այլ խօսքով, բազմաթիւ անուանեալ Զրիստոնեաներ, կը պաշտպանեն Եկեղեցին, նոյնիսկ նուիրատուութիւններ կ'ընեն, սակայն չեն յաճախեր եկեղեցի: Ծատ մը հաւատացեալներ կը փառաբանեն զԱստուած, սակայն չե՛ն հաւատար Աստուծոյ...:

Որովհետեւ տրամաբանութիւնը *հոգեկա՛ն* կարողութիւն է, չի կրնար լման գործել եթէ ազահուլթիւնն ու անձնապաշտութիւնը ապականեն հոգիին սրբութիւնը: Մարդ-արարած յարատեւօրէն ներջնչումի արբեցութեան ներքեւ չ'ապրիր, ոչ ալ շարունակ "Պայծառակերպութեան" յափշտակիչ լեռան կատարը կը բնակի: Մարդ՝ բնականէն հողաջէն է: Ստուեր է մարդ միայն, ան կը ծաղկի, սակայն չի պտղաբերիր: Անոր մղումները աւելի զօրաւոր են բան զգացումները: Աւելի դիւրաւ կը գահավիժի դեպի մեղանչում և կործանում բան թէ կը խոյանայ երկինք:

Մարդ՝ աշխարհի բարձրագոյն տրամաբանող էակն է, սակայն անոր տրամաբանելու զօրութիւնը կ'աղօտի հետեւեալ ախտանշաններէն ազդուած՝

ա. Տգիտութիւն

բ. Անգթութիւն

- գ. Ազահութիւն և
- դ. Փառամոլութիւն

Վերոյիջեալ սրբապղծութիւններն ու անամբրութիւնները երբ ապականեն ենթական, այդ անձը, բոլոր տրամաբանած ու դատած հարցերը արդար և ուղիղ կը տեսնէ: Որովհետեւ իր տրամաբանութեան դիտանկիւնը վերոյիջեալ չորս անկիւններէն կ'առաջնորդուի:

Հաւատուրաց կրօնաւորներ երբ խաչեցին Յիսուս Քրիստոսը, ոչ թէ միայն զեղջի չ'եկան, այլ՝ ըստ իրենց տրամաբանութեան՝ արդարութիւնը գործադրած եղան: Անոնց տրամաբանութիւնը Օրէնքի տառէն և իրենց փառամոլութեան դիտանկիւնէն կը սեւեռէր:

Ինչո՞ւ աշխարհի մէջ ընդհանրացած է ամուսնալուծումը: Ինչպէ՞ս երկու սիրավառ սրտեր, փոխանակ սիրելու զիրար, կը սկսին առել զիրար: Անցեալին երբ չէին ուզեր իրարմէ բաժնուիլ, այսօր իրարու աչքի՛ն անգամ չեն ուզեր նայիլ: Ոչ թէ տրամաբանութիւն չունին, այլ իրենց տրամաբանելու զգայարանը ապականած է: Անձնասիրութիւնն ու «ես»ի բնահաճոյքը պղտորած են իրենց դատողութիւնը:

Ինչո՞ւ նորաբողբոջ ազգեր, Ափրիկէի ցամաքամասին, զոհ գացած են ըմբոստութեան և ապստամբութեան:

Վերոյիջեալ ազգերը ոչ թէ ազգասէր չեն, այլ ազգասիրութիւնն ու ծայրայեղ անձնասիրութիւնը իրարու հետ կը ջիւթեն: Անոնք կ'ուզեն ծառայել ազգին, բայց նախ կ'ստիպեն որ ազգը *հպատակի՛* իրենց, կը ջանան փրկել ազգը, զայն կոտորելով և գերեվարելով: Հետեւանք կ'ըլլայ սով, հիւնադութիւն և մահ: Այս պատճառաւ սովը միահեծան կը տիրապետէ Ափրիկէի մէջ:

Միրոյ տրամաբանութիւնը չի ***պարտադրեր*** իր կամքը, այլ՝ կը ***մատուցանէ՛*** ինքզինքը: Միրոյ ամենացայտուն դիմագիծը ակնայայտ է Գողգոթայի Խաչեցեալին նայուածքին մէջ: Քրիստոսի չարչարակոծ դէմքը, սիրոյ մագնիսական ալիքներ կը ցայտէ համայն աշխարհի և մարդկութեան: Միրոյ տրամաբանութեամբ, անձ մը իր կամքը չի՛ *բռնախաբ*: ուրիշի վրայ, այլ՝ ինքզինք *կ'ընծայէ՛* անոր:

Ատելութեամբ ապականած տրամաբանութիւնը, մայրն է բոլոր չարիքներու, որոնք կը տեսնենք ու կը լսենք ամէն օր: Միրոյ տրամաբանութիւնը ակնադիւրս է բոլոր բարիքներու, հոգեկան գոհացումներու ու ներդաշնակ ապրումի:

Մի՛ խրատէք անձ մը տրամաբանելու երբ անոր հոգին պղտորած է ատելութեամբ: Հոգին այն վառելանիւթն է որ ջարժ-

ման մէջ կը դնէ տրամաբանութիւնը:

Տրամաբանութիւնը շարժող մղիչ զօրութիւնը, պէտք է հոսի սիրո՛յ զոհաբերակա՛ն անձնուրացութենէն: Հոն ուր պարտադրա՛նք կայ, հոն ուր ճնշում կայ, հոն ուր ստիպում կայ, տրամաբանութիւնը չի կրնար գործել:

Հոգին ձեւ կամ չափ չ'ունի: Ան կ'ապրի ազատութեան, ու երկնակամարի միջոցին մէջ կը ճախրէ ամպանման երեւոյթներով: Նիւթին կրնաս տալ ձեւ, չափ և կշիռ, բայց ոչ երբեք հոգիին: Անասունները կրնաս պարտադրել բու կամֆիդ: Տալ անոնց ձեւ և չափ, բայց ոչ մարդ արարածին: Մարդ՝ կաւաջէն է, այո, սակայն շաղախուած է ու դարձած հոգիի ու հողի բաղադրութիւն:

Կրնաս մարդը գերեզմարել, սակայն չես կրնար պարտադրել որ ան սիրէ՛ բեզ: Կրնաս նոյնիսկ սպաննել զայն, սակայն չես կրնար կալանաւորել: Զայն մի միայն կրնաս *ջահիլ*: Առինքնել զայն բու սիրովդ, և ի վերջոյ նոյնանալ անոր հետ բու անձնագոհութեամբդ: Յիսուս Զրիստոս չի պարտադրեց Սողոս Փարիսեցին, որ ան դաւնայ Իր առաքեալը: Մեր Տէրը սիրոյ հրապոյրով ջահեցաւ զայն ու դարձուց Պօղոս առաքեալի:

Հետեւեալը բիւրեղացեալ Սիրոյ տրամաբանութիւնն է.

«Եթէ խօսիմ մարդոց և հրեշտակներու և լեզուները, բայց սէր չու նենամ, կը նմանիմ պղինձի մը՝ որ կը հնչէ կամ ծնծողաներու՝ որ կը դողանջեն: Եթէ մարգարէութիւն և ընելու ջնտրի ու նենամ և հասկնամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ու նենամ ամբողջ հաւատքը՝ միևնա իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չու նենամ՝ ոչինչ եմ»-Ա. Կորնթ. ԺԳ.1-2:

Դեկտեմբեր 31, 1990

Թորոնթօ